

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ  
ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ\* ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է կինեմատոգրաֆիայի ոլորտում իրականացվող պետական քաղաքականության սկզբունքները, պետական աջակցության նպատակներն ու ձևերը, պետական կառավարման մարմինների, կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի լիազորությունները, ինչպես նաև հավաստագրի տրամադրման, հավաստագրի գործողության դադարեցման, նկարահանման վկայագրի տրամադրման, ֆիլմի ցուցադրման, ֆիլմի պահպանության, միջազգային համագործակցության, կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները:

Սահմանումը չափազանց ընդհանուր է: Բացակայում է հստակությունը և չի արտահայտում հայկական ֆիլմարտադրության զարգացմանը ուղղված միտում, որը պետք է երևա հենց հստակ ձևավերպված սահմանումից:

*Օրինակներ այլ երկրների օրենքներից՝*

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել ֆիլմարտադրության զարգացումը Լատվիայում՝ աջակցելով լատվիական ֆիլմերի ստեղծմանը և տարածմանը, ինչպես նաև պահպանմանը, պաշտպանությանը, հասանելիությանը և հանրայնացմանը:

The purpose of the Law is to ensure the development of the film industry in Latvia, supporting the creation and distribution of Latvian films, as well as the preservation, protection, accessibility and popularisation thereof.

<http://nkc.gov.lv/en/film-industry/laws/>

2. Այս օրենքը կարգավորում է ֆիլմերի ստեղծման, տարածման, առաջխաղացման և ցուցադրման հետ կապված հարաբերությունները Բուլղարիայի հանրապետությունում, և աջակցությունը բուլղարական ֆիլմարտադրությանը՝ ստեղծելով զարգացման նախապայմաններ:

This law shall regulate the relations in the making, distribution, promotion, and showing of films in the Republic of Bulgaria and the state support for the Bulgarian film industry, creating conditions for its development.

<https://www.nfc.bg/legal-acts>

3. Այս ակտը սահմանում է կինեմատոգրաֆիայի ոլորտում ֆիլմերի ստեղծարարության և այլ գործունեության աջակցության սկզբունքները և կինոարվեստի ռեսուրսների պահպանումը:

The Act defines the principles in respect of supporting film creativity and other activities in the field of cinematography and the protection of film art resources. (Poland)

<http://en.pisf.pl/film-law>

4. Նպատակ ունենալով խրախուսել դոմինիկյան ֆիլմերի զարգացումը, արտադրությունը, տարածումն ու պահպանումը, որպես հաղորդակցության և մշակութային բազմազանության միջոց և որպես հզոր տնտեսական պոտենցիալ պարունակող գործունեության տեսակ, Դոմինիկյան կառավարությունը ընդունել է Ֆիլմարտադրության մասին 108-10 օրենքը:

With the aim of stimulating the development, production, dissemination and preservation of Dominican films, as a mean of communication and cultural diversity and as an activity of great economic potential, the Dominican government enacted Law No. 108-10, the Film Industry Law.

Վերոնշյալ օրինակներում հստակ երևում է, որ նպատակը տվյալ երկրներում ֆիլմարտադրության զարգացումն է, ինչը բացակայում է օրենքի այս նախագծի մեջ, քանի որ չի նշվում Հայաստանում ֆիլմարտադրության ոլորտի զարգացումը որպես օրենքի հիմնական կամ գերակա նպատակ:

## **Յոթերորդ 2. Կինեմատոգրաֆիայի մասին իրավական ակտերը**

1. Կինեմատոգրաֆիայի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա գործում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի նորմերը:

**Յոթերորդ 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **Կինեմատոգրաֆիա**՝ մշակույթի և արվեստի ոլորտ, որն իր մեջ ներառում է ֆիլմի արտադրության ու օգտագործման հետ կապված գիտական, մասնագիտական, ստեղծագործական, տեխնիկական և կրթական գործունեության ամբողջությունը:

2) **Ֆիլմ**՝ տեսալսողական արտադրանք, որն ստեղծված է ստեղծագործական մտահղացման հիման վրա, բաղկացած է կինոժապավենի կամ այլ տեսակի կրիչների վրա ամրագրված և մեկ ամբողջական սյուժետով միավորված, միմյանց հետ հաջորդաբար կապակցված շարժական պատկերներից, բացառությամբ տեսահոլովակի, գովազդի, տեղեկատվական, անձնական և ընտանեկան բնույթի հաղորդումների:

Այս սահմանումն արդարացված չէ: Ֆիլմը կարող է և մեկ ամբողջական սյուժե կամ պատկերների հաջորդական կապ չունենալ, այն կարող է լինել ֆրագմենտար, էքսպերիմենտալ և այլն: Հասկանալի չէ, թե ինչու է ֆիլմի սահմանումը համեմատվում տեսահոլովակի, գովազդի և հաղորդումների հետ:

3) **Ֆիլմարտադրություն**՝ ֆիլմարտադրանք (ֆիլմ, ֆիլմի հիմնանյութեր) ստեղծելու նպատակով գործունեության իրականացումն է ստեղծագործական խմբի (սցենարի հեղինակ, բեմադրող ռեժիսոր, բեմադրող օպերատոր, բեմադրող նկարիչ, հնչյունային ռեժիսոր, գլխավոր խմբագիր, երաժշտական խմբագիր, մոնտաժող, ֆիլմի երաժշտության հեղինակ, մուլտիպլիկատոր, զգեստների նկարիչ-ձևավորող, դիմահարդար, դերասան և կինեմատոգրաֆիայի ոլորտի այլ մասնագետներ) ներգրավմամբ, տեխնիկական և այլ միջոցների օգտագործմամբ:

Նշված չէ, որ ֆիլմարտադրությունն իրականացվում է ֆիլմարտադրողի՝ պրոդյուսերի կողմից, որը դե յուրե հանդիսանում է ֆիլմի իրավատերը:

Ֆիլմի ստեղծում և ֆիլմարտադրություն տերմիններն էականորեն տարբեր են, քանի որ ֆիլմարտադրությունն իրականացվում է իրավաբանական անձի կողմից: Հիշատակելի է լատվիական օրենքի օրինակը՝

*Ֆիլմի ստեղծում՝ ստեղծագործական գաղափարների իրականացման գործընթաց, որի արդյունքը ֆիլմն է:*

*film creation – the process of implementing creative ideas, during which a film is created;*

4) **Ֆիլմի ենթագրում**՝ ֆիլմում գործող անձանց արտահայտած խոսք կամ այլ բացատրական բառեր պարունակող տեքստի արտածումն է կադրի ստորին հատվածում:

5) **Ֆիլմի վարձույթ**՝ ֆիլմի օգտագործման իրավունքի տրամադրումն է ցանկացած ձևով և միջոցներով:

«Ցանկացած ձևով և միջոցներով» ձևակերպումը մասնավորեցման և հիմնավորման կարիք ունի, ցանկալի է գործածել դիստրիբյուցիա/տարածում տերմինները:

6) **Ֆիլմի ցուցադրում**՝ ֆիլմի հրապարակային ցուցադրումն է կինոթատրոններում կամ հեռուստատեսությամբ, այդ թվում՝ մալուխային կամ արբանյակային հեռարձակմամբ, կամ զանգվածային հաղորդակցության այլ տեխնիկական միջոցներով:

Հստակեցված չէ, թե արդյո՞ք համալսարաններում (կրթական նպատակով ցուցադրություններ), ակումբներում կամ նմանատիպ այլ տեղերում ցուցադրությունը համարվում է հրապարակային, թե՞ ոչ:

7) **Ֆիլմարտադրող**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն, որը պատասխանատվություն է ստանձնել ֆիլմարտադրության և դրա ֆինանսավորման համար:

8) **Մատակարար**՝ ֆիլմարտադրության ծախսերի կազմում ներառված աշխատանքներ և (կամ) ծառայություններ իրացնող իրավաբանական անձ, որը համապատասխանում է լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած չափանիշներին:

Այս կետում ծառայությունների բնույթի և չափանիշների սահմանման չմասնավորեցումը կարող է դառնալ կամայական որոշումների պատճառ, ինչպես նաև հակասում է ՀՈԴՎԱԾ 4.3 ով ամրագրված ոլորտի սուբյեկտների իրավահավասարության սկզբունքը և կրում է կոռուպցիոն ռիսկ:

9) **Չավաստագիր**՝ փաստաթուղթ, որը հաստատում է ֆիլմարտադրության ծախսերի կազմում ներառված աշխատանքները և (կամ)

ծառայությունները դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով ձեռք բերելու իրավունքը:

10) **Նկարահանման վկայագիր`** փաստաթուղթ, որը հավաստում է հանրային տարածքներում նկարահանման գործընթացի հետ կապված իրավական ակտերի պահանջների կատարումը:

Սահմանումը հիմնավոր չէ և չի տալիս հետևյալ հարցերի պատասխանը` ու՞մ կողմից է կատարվում, ե՞րբ և ինչ պայմաններում է այդ փաստաթուղթը կիրառվում:

Առաջարկում ենք ներառել նաև ՖԻԼՄԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ տերմինը:

Կարծում ենք, որ վերոնշյալ տերմինների հետ միաժամանակ ամերաժեշտ է ներառել նաև միջազգային այլ տերմիններ, ինչպես օրինակ` ֆիլմարտադրողի հետ` կինոարտադրող, պրոդյուսեր, կամ ֆիլմարտադրության հետ` կինոարտադրություն, քանի որ անկախ կինոարտադրող ընկերությունների կանոնադրություններում գործածվում են հենց այդ տերմինները:

Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ օրենքի սույն նախագծում չկա որևէ հոդված նվիրված Ազգային ֆիլմ կամ Հայկական ֆիլմ սահմանումներին:

Ազգային ֆիլմ կամ հայկական ֆիլմ-ի սահմանումը պետք է նույն սկզբունքը ունենա, ինչ ցանկացած այլ երկրում:

*Օրինակ`*

- 1. Ռումինական օրենքում այն հնչում է այսպես. Ռումինական ֆիլմ է համարվում այն ֆիլմը, որն արտադրվել է գլխավորապես Ռումինիայի ստեղծագործական և տեխնիկական ներդրումով:*
- 2. Լատվիայի օրենքով լատվիական ֆիլմ է համարվում` Այն ֆիլմը, որն արտադրվել է Ազգային կինոկենտրոնում գրանցված լատվիական ֆիլմարտադրողի կողմից, համապատասխան գործընթացներով, որոնք նշված են կարգավորող*

ակտերում, և որի հիմնական ստեղծագործական կազմի առնվազն մեկ անդամը (ռեժիսոր, սցենարի հեղինակ, կոմպոզիտոր, ֆիլմի նկարիչ, անիմատոր կամ բեմադրող օպերատոր) հանդիսանում են Լատվիայի քաղաքացի կամ ունեն մշտական կացության իրավունք:

Մինչ այս օրենքի գործունեության մեջ մտնելը արտադրված ցանկացած ֆիլմ, որը հանդիսանում է Լատվիական մշակույթի նշանակալից մաս՝ իր գեղարվեստական, գիտական, պատմական կամ մշակութային արժեքով:

Ազգային կինոյի սահմանումն ավելացնելուց բացի, նաև առանձին պիտի նշվի ազգային ֆիլմերի պահպանության, տարածման, երկրի հեռուստատեսությամբ և կինոթատրոններում ցուցադրության պայմանները... որոնք գործում են ի նպաստ ազգային ֆիլմի, որպեսզի թե՛ ներսի և թե՛ դրսի համարտադրողին խթանի դիմել և ստանալ հայկական ֆիլմի կարգավիճակ:

#### **Յոթերորդ 4. Կինեմատոգրաֆիայի ոլորտում իրականացվող պետական քաղաքականության սկզբունքները**

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- 1) պետական, հասարակական և ժողովրդավարական կառավարում,
- 2) ստեղծագործական գործունեության ազատություն և ինքնուրույնություն,
- 3) կինեմատոգրաֆիայի ոլորտի սուբյեկտների իրավահավասարություն,
- 4) հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանություն,

Օրինագծում սահմանված չեն կինոյի ոլորտում հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության մեխանիզմները և ձևաչափը:

- 5) կինոժառանգության պահպանության առաջնահերթություն,
- 6) գործունեության թափանցիկություն և շահերի բախման կառավարում,
- 7) ֆինանսավորման հրապարակայնություն և հաշվետվողականություն:

Պետական քաղաքականության սկզբունքների մեջ ցանկալի է տեսնել ազգային կինոյի արժևորումը և զարգացումը: (Իհարկե, օրենքում ազգային կինոյի սահմանումը ներառելուց հետո:)

## **Հոդված 5. Կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական աջակցության նպատակներն ու ձևերը**

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական աջակցության նպատակներն են՝

*Այս բաժնի 2 և 3 կետերը ոչ թե պետական աջակցության նպատակներ են, այլ սկզբունքներ:*

1) կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացում և մրցունակության բարձրացում,

*Առաջարկում ենք ավելացնել՝  
միջազգային տարածում ձևակերպումը*

2) կինեմատոգրաֆիայի ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավում,

3) միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խթանում,

4) համատեղ ֆիլմարտադրության խթանում:

*Չկա որևէ հիշատակում այն մասին, որ այս օրենքը նպատակ ունի աջակցել ազգային կամ հայկական կինոյի արտադրության խթանմանը, դրանց հանրահռչակմանը և դիստրիբյուցիային:*

2. Կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցության ձևերն են՝

1) կինեմատոգրաֆիայի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում,

2) կրթական համակարգի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում,

3) կադրերի պատրաստում և վերապատրաստում,

4) նյութատեխնիկական հենքի արդիականացում,

5) ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում,

6) ֆինանսական և ներդրումային աջակցություն, երաշխիքների տրամադրում,

*6-րդ կետը, թերևս հստակեցման կարիք ունի, քանի որ հաշվի առնելով այլ երկրների օրինակները, հատկապես այս կետում է ներկայացվում ֆինանսավորման մոդելը, աջակցության ձևաչափը, օրինակ՝ անվերադարձ դրամաշնորհ, վերադարձվող դրամաշնորհ, հարկային, մաքսային և ֆինասական արտոնությունների ձևերը, և այլն: Ի սպառ բացակայում է որևէ հիշատակում սուբսիդիաների և դրանց իրագործման ձևերի վերաբերյալ:*

- 7) Ֆիլմի փառատոների ու շուկաների կազմակերպում,
- 8) Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աջակցություն:

## ԳԼՈՒԽ 2

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐԱՃ ԴԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### **Հոդված 6. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝
  - 1) իրականացնում է կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական միասնական քաղաքականություն,
  - 2) հաստատում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պահպանմանը և զարգացմանն ուղղված ծրագրեր,
  - 3) հավանություն է տալիս կինեմատոգրաֆիայի ոլորտի հայեցակարգերին և ապահովում է դրանց իրականացման նկատմամբ վերահսկողություն,
  - 4) սահմանում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական աջակցության տրամադրման կարգը և պայմանները,

Այս կետում «պետական աջակցության տրամադրման կարգը և պայմաններ» ձևակերպումը չափազանց խոցելի և անհասկանալի է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, օրենքի այս նախագծի և որևէ կետում հիշատակված չէ ֆինանսավորման մոդելը, աջակցության ձևաչափը, օրինակ՝ անվերադարձ դրամաշնորհ, վերադարձվող դրամաշնորհ, հարկային, մաքսային և ֆինասական արտոնությունների ձևերը, և այլն: Ի սպառ բացակայում է որևէ հիշատակում սուբսիդիաների և դրանց իրագործման ձևերի վերաբերյալ: Ուստի անհասկանալի է, թե ինչ ճանապարհներով է իրագործվելու պետական աջակցությունն ազգային կինոյին:

- 5) սահմանում է ֆիլմի դասակարգման կարգը,
- 6) սահմանում է հավաստագրի տրամադրման և հավաստագրի գործողության դադարեցման կարգը,
- 7) սահմանում է նկարահանման վկայագրի տրամադրման կարգը,

8) սահմանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող ֆիլմի գույքային իրավունքների օգտագործման տրամադրման կարգը

**Հստակեցված չէ, թե ո՞ր դեպքում է ֆիլմը հանդիսանում ՀՀ սեփականություն:**

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

*Առաջարկում ենք ավելացնել նաև.*

1. *Սահմանում է արտոնությունների քաղաքականություն ՀՀ տարածքում գրանցված արտադրող ընկերությունների համար:*

2. *Միջազգային կինոկազմակերպությունների հետ համատեղ արտադրության համաձայնագրեր է ստորագրում՝ աջակցելու և ընդլայնելու համագործակցության աշխարհագրությունը, ազգային կինոյի համար մրցունակ և շահավետ աշխատանքային պահյմաններ է ստեղծում:*

## **Յոթերորդ 7. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորությունները**

1. Մշակույթի ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված պետական կառավարման մարմին)՝

1) մշակում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական քաղաքականությունը,

2) մշակում է կինեմատոգրաֆիայի ոլորտի պահպանմանը և զարգացմանն ուղղված ծրագրեր ու հայեցակարգեր,

3) աջակցում է կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

4) աջակցում է ֆիլմարտադրությանը, ֆիլմի վարձույթին և ֆիլմի ցուցադրմանը,

5) աջակցում է կինեմատոգրաֆիայի ոլորտում կրթական ծրագրերի իրականացմանը, կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը,

6) աջակցում է ֆիլմի փառատոներին ու շուկաներին մասնակցելուն,

7) սահմանում է մատակարար համարվելու չափանիշները,

8) սահմանում է ֆիլմարտադրության ծախսերի կազմը և նվազագույն շահավետ գնի հաշվարկման նորմատիվները,

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Չի հստակեցվում թե սա ի՞նչ մարմին է: Ազգային կինոկենտրոն: Ազգային կինոինստիտուտ: Մշակույթի նախարարություն: Ի՞նչ իրավաբանական կարգավիճակ ունի: Ինչու՞ չի նշվում, որ այն ոչ-առևտրային կազմակերպություն է:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է մանրամասնել այս մարմնի ձևավորման կարգը, կառուցվածքը, գործունեության ժամկետը, ինչպես նաև ֆինանսների տնօրինման կարգն ու վերահսկողությունը:

9-րդ կետում կա կամայական ձևակերպում՝ ԱՅԼ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հարկ է մանրամասնել, հատկապես ինչպիսի՞ լիազորություններ: Հստակության բացակայությունը կրեթի անսահման լիազորությունների, ինչը կխանգարի արտադրողներին աշխատել:

Անհրաժեշտ է օրենքով սահմանել, որ լիազորված պետական կառավարման մարմինը մշակում է ֆիլմերի ֆինանսավորման հստակ կանոնակարգ, իրավունք չունի ներկայանալ որպես արտադրող, համատեղ արտադրող և մատուցել արտադրական ծառայություններ, քանի որ այն կհանգեցնի մենաշնորհի, շահերի բախման, կխանգարում կինոարտադրության զարգացմանը, և կհակասում սույն օրինագծում հայտարարված իրավահավասարության դրույթին:

*Լեհաստանի օրենքը Լեհական կինոինստիտուտի գործունեությունը սահմանում է հետևյալ կերպ՝*

*Կինոինստիտուտն իր ռեսուրսները և միջոցները տնօրինում է անկախ, առաջնորդվելով իր ընդունած արդյունավետության սկզբունքներով:*

*Կինոինստիտուտը չի կարող ծավալել որևէ տնտեսական գործունեություն:*

*The Institute manages its assets independently, in the framework of the resources it owns, being guided by the principle of using them effectively.*

*The Institute cannot undertake economic activities.*

Հստակեցված չէ նաև տվյալ մարմնի կառուցվածքը՝ նախագահ կամ տնօրեն, խորհուրդ, փորձագետների հանձնախումբ... չի պարզաբանում նրանց ընտրության ձևը և պաշտոնավարման ժամկետն ու պայմանները:

## **Հոդված 8. Կինեմատոգրաֆիայի ազգային մարմնի լիազորությունները**

1. Հայաստանի Հանրապետության կինեմատոգրաֆիայի ազգային մարմինը (այսուհետ՝ Ֆիլմ հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության կողմից ստեղծված և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Ֆիլմ հանձնաժողովը՝

1) ուսումնասիրում և լիազորված պետական կառավարման մարմնին առաջարկություններ է ներկայացնում կինեմատոգրաֆիայի ոլորտի օրենսդրության կատարելագործման, կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանը նպաստող պետական քաղաքականության մշակման և կինեմատոգրաֆիայի ոլորտում պետական ֆինանսավորման ուղղությունների, գիտական ու կրթական ծրագրերի վերաբերյալ,

2) հավաքում, մշակում, կուտակում և տարածում է կինեմատոգրաֆիայի ոլորտի հետ կապված տեղեկատվությունը, վարում է ֆիլմերի շտեմարանը,

3) մշակում է կինեմատոգրաֆիայի ոլորտի հետ կապված համատեղ աշխատակարգեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,

4) մատուցում է համալիր ծառայություններ կինեմատոգրաֆիայի ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական ու ֆիզիկական անձանց պետական և ոչ պետական մարմինների հետ կապված հարաբերություններում,

**Անհրաժեշտ է հստակեցնել «Համալիր ծառայություններ» սահմանումը:**

5) աջակցում է կինեմատոգրաֆիայի ոլորտում հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությանը,

6) իրականացնում է կինեմատոգրաֆիայի ոլորտի հետ կապված ծրագրերի ֆինանսավորումը,

7) համագործակցում է օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ իր լիազորությունների շրջանակներում,

**Հարկ է մանրամասնել կառույցի լիազորությունների սահմանը, մասնավորապես նշել, որ կառույցը չի ունենալու կինոարտադրությամբ, համատեղ արտադրությամբ կամ արտադրական ծառայությունների մատուցմամբ զբաղվելու իրավունք:**

8) վերահսկում է կինեմատոգրաֆիայի ոլորտում գործունեություն իրականացնողների կողմից սույն օրենքում սահմանված պահանջների կատարումը,

իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Օրենքի այս նախագծում պարբերաբար գործածվող այլ լիազորություններ ձևակերպումն անճշտության տպավորություն է ստեղծում և հղի է հետագա կամայական որոշումներ կայացանելու վտանգով, հատկապես, որ դեռևս անհայտ են կամ հասանելի չեն վերոնշյալ իրավական այլ ակտերն ու կազմակերպությունների կանոնադրությունները:

Հստակեցված չէ նաև տվյալ մարմնի կառուցվածքը՝ նախագահ կամ տնօրեն, խորհուրդ, փորձագետների հանձնախումբ... չի պարզաբանում նրանց ընտրության ձևը և պաշտոնավարման ժամկետն ու պայմանները:

Հասկանալի և պատճառաբանված չէ, թե ինչու է Ֆիլմ-հանձնաժողովը կարգավորում ազգային կինոյի գործառույթները: Հիշվի առնելով միջազգային փորձը՝ ֆիլմ-հանձնաժողովը պետք է լինի կամ անկախ կամ էլ Լիազորված պետական մարմնի ճյուղերից մեկը ընդամենը: Ֆիլմ-հանձնաժողովի գործառույթն է կարգավորել օտարերկրյա արտադրող ընկերությունների հնարավոր տեխնիկական, իրավական, տարածքային և այլ խնդիրները՝ շահավետ մրցակցային պայմաններ ստեղծելով տեղական արտադրող ընկերությունների հետ համագործակցության համար, ապահովելով սույն օրենքի նախագծի Հոդված 4, կետ 3-ում նշված իրավահավասարության սկզբունքը:

Ֆիլմ-հանձնաժողովը հանդիսանում է առանձին մարմին և չի կարող միջամտել լիազորված պետական մարմնի կայացրած ստեղծագործական բովանդակային որոշումներին:

### **ԳԼՈՒԽ 3**

## **ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՆԿԱՐԱՅԱՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ՖԻԼՄԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ՖԻԼՄԻ ԼԵՉՈՒՆ ԵՎ ՖԻԼՄԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **Հոդված 9. Հավաստագրի տրամադրումը**

1. Ֆիլմարտադրության համար բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակով հավաստագիր է տրամադրվում Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումների շրջանակներում առնվազն 100 մլն Հայաստանի

Հանրապետության դրամի չափով ֆիլմարտադրությունն իրականացնելու դեպքում:

2. Հավաստագրի հիման վրա ֆիլմարտադրողը ֆիլմարտադրության ծախսերի կազմում ներառված աշխատանքները և (կամ) ծառայությունները մատակարարներից ձեռք է բերում դրանց նվազագույն շահավետ գնից 20 տոկոս ցածր գնով, ինչի արդյունքում մատակարարների չստացած եկամուտը (նվազագույն շահավետ գնի և իրացման գնի տարբերությունը) փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

3. Հավաստագիր ստանալու համար ֆիլմարտադրողը մինչև ֆիլմարտադրություն իրականացնելը դիմում է լիազորված պետական կառավարման մարմնին՝ ներկայացնելով իր և ֆիլմարտադրության վերաբերյալ մանրամասն ու հավաստի տեղեկատվություն, ինչպես նաև սույն օրենքի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթեր:

4. Հավաստագրի տրամադրումը և գնային արժեքի որոշումը իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

**Տվյալ հավաստագրի ներմուծումը ոչ ռազմավարական է և չի ստեղծելու բարենպաստ մթնոլորտ ֆիլմարտադրության համար, այլև վնաս է հասցնելու հայկական կինոարտադրության զարգացմանը:**

*Նախ և առաջ, այս ռազմավարությունից չի շահում ոչ տեղակար արտադրողը, որ էլ մատակարարը:*

*Սույն օրենքի նախագծով հստակեցված չէ՝*

- 1. ի՞նչ սկզբունքներով է և ում կողմից է տրվելու վերոնշյալ հավաստագիրը, ինչն էլ կարող է ենթադրել մենաշնորհային և կոռուպցիոն ռիսկեր,*
- 2. թե՞ ո՞ր միջոցներից է 20 տոկոսի փոխհատուցումն իրականացվելու մատակարարին, արդյո՞ք այդ փոխհատուցումը չի կատարվելու ֆիլմարտադրության պետական բյուջեի հաշվին,*
- 3. ո՞վ է ստանում հավաստագիրը՝ արտադրողը թե՞ մատակարարը,*
- 4. արդյո՞ք բոլորը տեղական արտադրողները կարող են ստանալ հավաստագիր,*
- 5. արդյո՞ք հավաստագիրը վճարովի է, թե՞ ոչ:*
- 6. որտե՞ղ է սահմանվելու մատակարարներին կամ արտադրողներին հավաստագիր չտրամադրելու, մերժումի հիմնական պատճառները,*
- 7. ե՞րբ է փոխհատուցվում վերոնշյալ 20 տոկոսը՝ ֆիլմի ավարտին, ֆինսական տարվա ավարտին, թե՞ ...,*
- 8. արդյո՞ք ամբողջ 100 մլն և ավելիի 20 տոկոսն է ենթակա փոխհատուցման, թե՞ ամբողջ բյուջեի որոշակի ծախսերինը միայն, ապա որոնք են այդ ծախսերը կամ բյուջետային գծերը, որոնք ենթակա են փոխհատուցման:*

- առաջարկում ենք, որպեսզի սահմանված 100 մլն և ավելիի շերտ վերանայվի վավերագրական ֆիլմերի արտադրության պարագայում, որի բյուջեն անհամեմատ ցածր է ողջ աշխարհի կինոարտադրության օրինակով:

### **Յոդված 10. Հավաստագրի գործողության դադարեցումը**

1. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե հավաստագիր ստացողը ներկայացրել է դիմում հավաստագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ կամ խախտել է սույն օրենքի պահանջները:

2. Հավաստագրի գործողության դադարեցման դեպքում մատակարարների չստացած եկամուտի փոխհատուցման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներն ամբողջությամբ վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հավաստագիր ստացողի կողմից:

3. Հավաստագրի գործողության դադարեցումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

### **Յոդված 11. Նկարահանման վկայագրի տրամադրումը**

1. Նկարահանման վկայագիր է տրամադրվում հանրային տարածքներում նկարահանման գործընթացի հետ կապված իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերի առկայության դեպքում:

4. Նկարահանման վկայագիր ստանալու համար ֆիլմարտադրողը մինչև հանրային տարածքներում նկարահանում իրականացնելը դիմում է լիազորված պետական կառավարման մարմնին՝ ներկայացնելով նկարահանման գործընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև սույն օրենքի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթեր:

2. Նկարահանման վկայագրի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է առանց նկարահանման վկայագրի իրականացնել ֆիլմի նկարահանում հանրային տարածքներում:

**Նկարահանումների վկայագիրը կարող է գործել ի վնաս առանց այդ էլ փոքր բյուջեով աշխատող տեղացի արտադրողների և ստեղծագործողների:**

Եթե վկայագրի ստացումը վճարովի է, ապա հասկանալի չէ, թե արդյո՞ք նույն պայմաններով են դիտարկվելու գեղարվեստական, կոմիերցիոն, գովազդային, ուսանողական, վավերագրական կամ սիրողական նկարահանումների վճարը:

*Օրինակելի է Բարսելոնայի հաջողված փորձը, որտեղ գեղարվեստական ֆիլմերի նկարահանումը անվճար է, իսկ գովազդային և երաժշտական տեսահոլովակների, կոմերցիոն ֆոտոնկարահանումների թույլտվությունը վճարովի, և տվյալ վճարները ուղղվում են ֆիլմարտադրության պետական բյուջե:*

**Վկայագիրն ավելացնում է բյուրոկրատական քաշքշուկը, որից փորձում են ազատվել իրենց ֆիլմարտադրությունը զարգացնող երկրները:**

## **Յոթերորդ 12. Ֆիլմի դասակարգումը**

1. Հասարակական կարգի, բարոյական նորմերի և երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով Հայաստանի Հանրապետությունում ֆիլմի ցուցադրում իրականացվում է ֆիլմը ըստ դիտողների տարիքային սահմանափակման չափորոշիչների դասակարգելու և դրա մասին նշում կատարելու դեպքում:

2. Ֆիլմի դասակարգման աստիճաններն են՝

1) (0+) երեխաների համար նախատեսված՝ վերջիններիս առողջությանը, մտավոր ու ֆիզիկական զարգացմանը և դաստիարակությանը չվնասող ֆիլմեր,

2) (6+) ընտանեկան դիտումների համար նախատեսված՝ երոտիկ բնույթի տեսարաններ, սարսափի և բռնության դրվագներ չպարունակող, ինչպես նաև անչափահասների առողջությանը, մտավոր ու ֆիզիկական զարգացմանը և դաստիարակությանը չվնասող ֆիլմեր,

3) (12+) երոտիկ բնույթի տեսարաններ և բռնության դրվագներ պարունակող, սակայն դրանք բացահայտ չցուցադրող և դրանց դրոմանը կամ արդարացմանը չնպաստող, ինչպես նաև անչափահասների առողջությանը, մտավոր ու ֆիզիկական զարգացմանը և դաստիարակությանը չվնասող ֆիլմեր,

4) (16+) երոտիկ բնույթի տեսարաններ, սարսափի և բռնության դրվագներ պարունակող, սակայն դրանց դրոմանը կամ արդարացմանը չնպաստող և դիտողի ենթագիտակցության ու առողջության վրա բացասական ազդեցություն չունեցող ֆիլմեր,

5) (18+) սարսափի և բռնության դրվագներ պարունակող, սակայն դրանց դրոմանը կամ արդարացմանը չնպաստող, ինչպես նաև երոտիկ բնույթի տեսարաններ պարունակող, սակայն դիտողի ենթագիտակցության ու առողջության վրա բացասական ազդեցություն չունեցող ֆիլմեր:

3. Ֆիլմի դասակարգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է առանց ֆիլմի դասակարգման մասին դիտողներին տեղեկացնելու նպատակով համապատասխան նշում կատարելու իրականացնել ֆիլմի ցուցադրում:

Դասակարգման չափանիշները չափելի չեն և պարզ չէ, թե ով է ֆիլմերի դասակարգումը իրականացնող մարմինը:

Դիտողի ենթագիտակցության և առողջության վրա բացասական ազդեցությունը չափելի չէ և սուբյեկտիվ: Միջազգային պրակտիկայում տարիքային սահմանափակումը կիրառվում է հստակ նկարագրված տեսարանների գոյության չափանիշով:

### **Յոթերորդ 13. Ֆիլմի լեզուն**

1. Հայերեն լեզվի կենսագործունեության ապահովման և զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետությունում օտարալեզու ֆիլմի ցուցադրում կատարվում է հայերեն կրկնօրինակմամբ և (կամ) հայերեն ենթագրմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջը չի տարածվում ֆիլմում հնչող երաժշտական տարբեր ժանրերի ստեղծագործությունների և այն դրվագների վրա, որոնք էական չեն և (կամ) ֆիլմի մտահղացմամբ պետք է լինեն անհասականալի դիտողների համար:

3. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է առանց հայերեն թարգմանության իրականացնել օտարալեզու ֆիլմի ցուցադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն կատարվում է.

- 1) ֆիլմի փառատոների ու շուկաների շրջանակներում,
- 2) օտար լեզուների իմացության բարելավման և (կամ) ուսուցման նպատակով,
- 3) Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների համար,
- 4) մալուխային կամ արբանյակային հեռարձակմամբ, կամ զանգվածային հաղորդակցության այլ տեխնիկական միջոցներով:

Լեզվի սահմանափակումը կինոյի ոլորտում ունի վիճելի կողմեր: Բնօրինակի ցուցադրությունը կոնկրետ դեպքերում նախընտրելի է և կարելի է ներմուծել տոկոսային սահմանափակման համակարգ ոչ հայալեզու ֆիլմերի ցուցադրության համար:

### **Յոթերորդ 14. Ֆիլմի պահպանությունը**

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ֆիլմի պահպանությունն իրականացվում է «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## **ԳԼՈՒԽ 4**

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### Հոդված 15. Միջազգային համագործակցությունը

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտում միջազգային համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերին և միջազգային պայմանագրերին համապատասխան և նախատեսում է.

1) համատեղ ֆիլմարտադրության ծրագրերի իրականացում,

Առաջարկում ենք հետևյալ ձևակերպումը՝

Համատեղ արտադրության պայմանագրերի ստորագրում:

2) ֆիլմերի մասնակցությունն օտարերկրյա պետություններում կազմակերպվող ֆիլմի միջազգային փառատոներին ու շուկաներին,

3) հայկական ֆիլմի օրերի, շաբաթների, ֆիլմի փառատոների ու շուկաների կազմակերպում օտարերկրյա պետություններում:

Առաջարկում ենք Կազմակերպում տերմինը փոխարինել մասնակցություն տերմինով, քանի որ Հայաստանն այլ երկրներում ոչ թե կազմակերպում, այլ մասնակցում է վերոնշյալ միջոցառումներին:

4) օտարերկրյա ֆիլմարտադրողների, միջազգային կազմակերպությունների մասնակցության ապահովում Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող միջոցառումներին,

5) միջազգային համագործակցության այլ ձևեր:

### Հոդված 16. Համատեղ ֆիլմարտադրությունը

1. Համատեղ ֆիլմարտադրություն է համարվում մեկ կամ մի քանի օտարերկրյա ֆիլմարտադրողների հետ համատեղ ստեղծված ֆիլմը, որի արտադրության նախահաշվային արժեքի առնվազն 10 տոկոսը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆիլմարտադրողի կողմից:

Այս կետից 10 տոկոսի պարտադիր պայմանը պետք է միանշանակ դուրս գա, քանի որ նույն հոդվածի 2-րդ կետում հիշատակվող կոնվենցիան արդեն իսկ կարգավորում է այդ խնդիրը և անհրաժեշտ է սեփական արտադրողին սահմանափակել ի վնաս իրեն և երկրին:

Նույնիսկ ոչ պաշտոնական համատեղ արտադրողը ֆիլմի տիտրերում մտում է համատեղ արտադրող: 10 տոկոսը միայն պաշտոնական համատեղ արտադրության դեպքում է նախատեսվում: Այդ հարցը վերստին կարգավորվում նույն հոդվածի 2-րդ կետում հիշատակվող կոնվենցիայով:

Առաջարկում ենք 1-ին կետը վերաձևակերպել՝  
*Համատեղ արտադրություն է համարվում հայ ֆիլմարտադրողի մասնակցությամբ մեկ կամ ավելի երկրների հետ համատեղ ստեղծված ֆիլմը:*

2. Եվրոպայի խորհրդի 1992 թվականի հոկտեմբերի 2-ի «Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության մասին» կոնվենցիային միացած պետություններում համատեղ ֆիլմարտադրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են հիշյալ կոնվենցիայի դրույթներով:

Համատեղ արտադրության հոդվածի ներքո պետք է ամրագրվի, որ արտասահմանյան ֆիլմը կարող է դիմել ՀՀ կինոյի պետական աջակցության (փոքրամասնական համատեղ արտադրություն) միայն տեղացի ֆիլմարտադրողի միջոցով, որը հանդես կգա որպես համատեղ արտադրող:

Այս օրինագծում պետք է հստակեցվեն չափանիշներ, որոնց դեպքում տեղացի ֆիլմարտադրողը կարող է դիմել արտասահմանյան ընկերության հետ փոքրամասնական համատեղ արտադրության աջակցության հայտով:

## ԳԼՈՒԽ 5

### ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

#### **Հոդված 17. Կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման աղբյուրները**

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման աղբյուրներն են՝
- 1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներ,
  - 2) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից հատկացված միջոցներ,
  - 3) ֆիլմ հանձնաժողովի գործունեության արդյունքում ստացված միջոցներ,

Այս կետը պահանջում է հստակեցում, թե ի՞նչպիսի գործունեություն կարող է ծավալել հանձնաժողովը միջոցներ ստանալու համար և պետք է սահմանվի, որ այդ հանձնաժողովն արտադրությամբ զբաղվելու իրավունք չունի:

Այլ երկրների (Նորվեգիա, Դանիա, Իսպանիա, Լեհաստան, Շվեդիա և այլն) օրինակները ցույց են տալիս, որ ֆիլմ-հանձնաժողովի մատուցած ծառայություններն անվճար են, ստեղծված են երկրի առաջխաղացման համար և գործում են բացառապես պետական միջոցների և նվիրատվությունների հաշվին:

4) Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ միջոցներ:

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ կարող են հանդիսանալ՝*

- 1. գովազդի շահույթի որոշակի տոկոսը (Օրինակ՝ Լեհաստանում սահմանված է 1.5 տոկոս),*
- 2. հեռուստատեսային գովազդի շահույթի որոշակի տոկոսը (օրինակ՝ Ռուսինիայում սահմանված է 3 տոկոս),*
- 3. հարկային արտոնություններ,*
- 4. խաղարկություններ (ինչպես Հունգարիայում, Անգլիայում և այլն);*
- 5. Դոմինիկյան հանրապետության օրինակով՝ կինոթատրոնների տոմսերի և մուտքավճարներից գոյացած հարկերից, ֆիլմերի վաճառքից և վարձակալությունից առաջացած հարկային եկամուտներից (revenues generated by the tax on transfer of goods and services on sales and rentals of movies),*
- 6. կինոթատրոնների ներսում ապրանքների վաճառքից առաջացած հարկային եկամուտներից:*

## **Հոդված 18. Պետական բյուջեի միջոցների հաշվին Ֆինանսավորումը**

1. Կինեմատոգրաֆիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորում կատարվում է ներդրումների և անհատույց հատկացումների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Անհրաժեշտ է, որպեսզի աջակցության մեխանիզմն օրենքի նախագծում ներկայացվի առանձին դրույթով և մանրամասն: Այլ երկրների պես, պետք է այնտեղ հաստատագրվի, որ պետական ֆինանսավորումը լիազորված մարմնի միջոցով շնորհվվում է որպես ֆինասական աջակցություն/ սուբսիդիա/ դրամաշնորհ՝ արտադրողին: Որոշ դեպքերում այն կարող է լինել վերադարձվող դրամաշնորհ:

Հակառակ դեպքում այլ երկրների հետ համատեղ արտադրության հնարավորությունները փոքրանում են, եթե մեր օրենքն այդ հարցում տարբեր է և աջակցության մեխանիզմն առանձին դրույթով մանրամասն ներկայացված չէ:

Չի կարող տվյալ երկրում արտադրություն իրականացնողը համատեղ արտադրություն իրականացնել պետության հետ: Բոլոր դեպքերում պետական ցանկացած աջակցության դեպքում հեղինակային և սեփականության իրավունքը պետք է մնա արտադրողին:

Արտասահմանյան ֆոնդերը չեն ֆինանսավորում որևէ երկրորդ պետությանը, այլ միայն այդ երկրի անկախ արտադրողին, որն իր սեփական երկրում արդեն իսկ ունի աջակցություն և իրեն են պատկանում հեղինակային և սեփականության իրավունքները:

Պետական բյուջեից ֆինանսավորման ձևին պետք է հաջորդեն հոդվածներ որոնք օրենքով ամրագրեն պետական ֆինանսավորման կանոնակարգի հիմնական սկզբունքները՝ նպաստելու զարգացմանը և կանխելու ապագա հնարավոր կամայական մոտեցումները:

#### ԱՅԴ ԹՎՈՒՄ՝

1. *պետական բյուջեի ֆինանսավորումը տրվում է միայն տեղացի ֆիլմարտադրողին:*

2. *պետական ֆինանսավորում ստանալու համար օրենքը պետք է նաև սահմանի հիմնական ստեղծագործական կազմի այն տոկոսը ովքեր հանդիսանում են ՀՀ քաղաքացի կամ ռեզիդենտ: Հիմնական ստեղծագործական կազմի մեջ մտնում են՝ բեմադրող ռեժիսոր, սցենարի հեղինակ, բեմադրող օպերատոր, կոմպոզիտոր, բեմադրող նկարիչ, բեմադրող անիմատոր:*

3. *Ֆիլմերի ֆինանսավորման բաշխումը պետք է կատարվի մրցութային սկզբունքով: Օրենքը չպետք է թույլ տա, որպեսզի որևէ ֆիլմ կամ արտադրող ընկերություն արտամրցութային սկզբունքով ստանա պետական աջակցություն: Սահմանվում է առանձին ֆինանսավորում արտադրության բոլոր փուլերի համար (զարգացում, արտադրություն, հետարտադրություն, տարածում-փառատոնային մասնակցություն): Պետք է հստակ սահմանել յուրաքանչյուր փուլի տարեկան բյուջեն և առավելագույն չափն առանձին ֆիլմի համար:*

4. *Սահմանվում է առանձին ֆինանսավորում ազգային կամ հայկական ֆիլմերի առանձին կատեգորիաների համար՝ (խաղարկային՝ լիամետրաժ,*

կարճամետրաժ, վավերագրական՝ լիամետրաժ, կարճամետրաժ, դերյուսուներ՝ լիամետրաժ, կարճամետրաժ, անիմացիոն ֆիլմեր՝ լիամետրաժ, կարճամետրաժ և մանկական ֆիլմեր, էքսպերիմենտալ ֆիլմեր):

Հստակ սահմանվում է յուրաքանչյուր կատեգորիայի տարեկան բյուջեն և առավելագույն չափը որ կարող է տրվել առանձին ֆիլմին:

5. Սահմանվում է առանձին ֆինանսավորում արտասահմանյան ֆիլմերի արտադրության մասնակցելու համար: Այդ ֆիլմերը պետք է ունենան փոքրամասնական հայ արտադրող: Հայաստանի պետական լիազորված մարմին ֆինանսական աջակցության համար կարող է դիմել միմիայն հայ ֆիլմարտադրողը, որն արտասահմանյան ֆիլմի համատեղ արտադրողն է:

6. Հստակ սահմանվում է փոքրամասնական ֆիլմերի արտադրության տրվող տարեկան բյուջեն և առանձին ֆիլմին տրվող ֆինանսավորման չափը:

Արտասահմանյան ֆիլմին տրվող ֆինանսավորման չափը (փոքրամասնական արտադրություն) չի կարող գերազանցել հայկական ֆիլմին տրվող գումարի չափին (մեծամասնական արտադրություն):

7. Համատեղ արտադրության բոլոր ձևաչափերով հատկացված պետական գումարը պետք է ծախսվի Հայաստանի Հանրապետությունում:

Միջազգային կինոաշխարհում երկրի հեղինակությունը բարձրացնելու համար, շատ երկրներում համատեղ արտադրության ֆինանսավորման պայմաններից մեկն է երկրի ստեղծագործական ներուժի ներգրավվածությունը:

Առանձին հողվածով շատ օրենքներում ամրագրվում է զարգացմանն ուղղված առաջնահերթություն, որով առաջնորդվում է նախագծերի ընտրող հանձնաժողովը:

Օրինակ Բուլղարիայի օրենքում այն հնչում է այսպես՝

Պետական ֆինանսավորման դիմող նախագծերը դիտարկվում են ըստ հետևյալ չափանիշների՝

1. դրանց գեղարվեստական պոտենցիալը Եվրոպական մշակութային բազմազանության համատեքստում,
2. դրանց կոմերցիոն պոտենցիալը և միջազգային ճանաչման հնարավորությունները,
3. առաջարկված նախահաշվի տնտեսական պոտենցիալը,
4. արտադրողի ներկայացրած ռազմավարական ծրագրի ամբողջականությունը՝ նախագծի կառավարման և առաջխաղացման տեսանկյունից,

5. պրոդյուսերի և ռեժիսորի մասնագիտական փորձը, հանդիսատեսի կողմից նրանց նախորդ աշխատանքների ճանաչվածությունը, ինչպես նաև նրանց աշխատանքների՝ միջազգային կինոփառատոների, ազգային և միջազգային մասնագիտական ասոցիացիաների կողմից ընդունված/ճանաչված լինելը:

Վերջին կետը չի վերաբերվում Բուլղարական դեբյուտային ֆիլմերի պետական աջակցությանը:

*Projects applying for state subsidy shall be ranked according to:*

- 1. their artistic potential within the context of the European cultural diversity;*
- 2. their commercial potential and opportunities for international recognition;*
- 3. the economic justification of the proposed budget;*
- 4. the thoroughness of the strategic plan submitted by the producer with regard to the management and promotion of the project;*
- 5. the professional experience of the producer and the director, the viewers' recognition of their earlier works, as well as the recognition of these works at international festivals and nominations of professional organisations and associations.*

*The provisions under (1), item 5, shall not be applied with regard to state support for Bulgarian debut films.*

<https://www.nfc.bg/legal-acts>

Առանձին հոդվածով նաև սահմանվում է պետական բյուջեից կինոժառանգության պահպանության, թվայնացման, ժամանակակից ստանդարտների և կրիչների փոխադրման տարեկան բյուջեն և տնօրինման սկզբունքները:

2. Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորում կատարվում է ֆիլմարտադրության, ֆիլմի վարձույթի, ֆիլմի ցուցադրման, ինչպես նաև մատակարարների չստացած եկամուտը փոխհատուցելու համար, որը չի կարող գերազանցել՝

1) ֆիլմարտադրության, այդ թվում՝ նախապատրաստական և հետարտադրական գործընթացների, նախահաշվային արժեքի 70 տոկոսը,

2) ֆիլմի վարձույթի, այդ թվում՝ վերարտադրման և տարածման, նախահաշվային արժեքի 70 տոկոսը,

ֆիլմի ցուցադրման, այդ թվում՝ ֆիլմի միջազգային փառատոներում ու շուկաներում մասնակցության, նախահաշվային արժեքի 70 տոկոսը,

Ինչպես արդեն նշել ենք, անհրաժեշտ է հստակեցնել, թե որտեղից է հատկացվելու վերոնշյալ 20 տոկոսի փոխհատուցումը, քանի որ ֆիլմերի ստեղծման սուղ պետական միջոցներն ուղղելով մատակարարների չստացած եկամուտը փոխհատուցելուն, որից միայն շահում են օտարերկրյա մեծ բյուջեով ֆիլմերը, վնաս է հասցվելու հայկական ֆիլմերի արտադրությանը:

Օրենքի սույն նախգի ՀՈՒՎԱԾ 18.2.1-ում նախապատրաստական փուլը դիտարկվում է որպես հիմնական արտադրական փուլի մաս, այն ինչ պետք առանձնանցել 4 հիմնական փուլեր իրենց առանձին ֆինանսական բաշխումներով և նախապատրաստական ձևակերպումը փոխարինել Ջարգացում տերմինով: Ֆինանսավորման փուլերն են՝ նախագծերի զարգացում, արտադրություն, հետարտադրություն, տարածում-փառատոների մասնակցություն:

Օրենքի սույն նախգի ՀՈՒՎԱԾ 18.2.2-ում նշվում է, որ փառատոների և շուկաների մասնակցության համար տրվում է նախահաշվային արժեքի 70 տոկոսի աջակցություն: Առաջարկում ենք, որպեսզի A կարգի կինոփառատոների մրցութային ծրագրերին մասնակցող ֆիլմերին հատկացվի 100% ֆինանսավորում, ներառյալ՝ ֆիլմի առաջխաղացման և ներկայացման ծախսերը:

Կինոփառատոների և կինոշուկաների մասնակցությունն առաջնահերթությունը պետք է հստակեցվի.

*Օրինակ՝ Առաջնահերթությունը տրվում է կինոփառատոների, կինոպլատֆորմերի կողմից ընտրված ֆիլմերին և կինոնախագծերին /Selection/, հետո միայն սեփական նախաձեռնությամբ կինոշուկայում ներկայացվող կինոնախագծերին կամ ֆիլմերին:*

3) հավաստագրի հիման վրա ցածր գնով իրացված աշխատանքների և (կամ) ծառայությունների նվազագույն շահավետ գնի 20 տոկոսը:

Այս կետի վերաբերյալ մեր առաջարկություններն ու մեկնաբանությունները կարող եք տեսնել ՀՈՒՎԱԾ 9-ի ներքո:

## ԳԼՈՒԽ 6 ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅՈՒՆԸ

## **Յոդված 19. Սուլյն օրենքի խախտման համար պատասխանատվությունը**

1. Սուլյն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

### ԳԼՈՒԽ 7 ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## **Յոդված 20. Անցումային դրույթներ**

2. Սուլյն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սուլյն օրենքի 12-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից:

\*«Կինեմատոգրաֆիա» բնորոշումը ենթակա է փոփոխման. հայահունչ ճիշտ տարբերակի համար նախարարությունը պաշտոնապես դիմել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտին:

## **Օրինագծի մեկնաբանությունները, փաստարկներն ու առաջարկները կազմել են Հայաստանի անկախ կինոգործիչների ակումբի անդամները՝**

1. **Արմինե Անդա** - պրոդյուսեր, դերասանուհի, գրող, ՀՈՇԿԻ ՖԻԼՄ կինոընկերության, հիմնադիր, Եվրոպական աուդիովիզուալ նախաձեռնության անդամ,
2. **Արևիկ Ավանեսյան** - պրոդյուսեր, ԱՓ Ֆիլմ ստուդիայի համա-հիմնադիր,
3. **Գագիկ Ղազարե** - կինոռեժիսոր, ՄԷԿ ԿԱԴՐ կարճ ֆիլմերի միջազգային փառատոնի հիմնադիր,
4. **Դիանա Կարդումյան**- ռեժիսոր,
5. **Լուսինե Սարգսյան** - կինոռեժիսոր, պրոդյուսեր («ILLUSION» production LLC), «CONTACT» CC NGO-ի համահիմնադիր-նախագահ,
6. **Հասմիկ Հովհաննիսյան** - պրոդյուսեր, HY pictures ընկերության հիմնադիր,
7. **Հարություն Մանգասարյան** - Հնչունային ռեժիսոր, HY records ձայնագրման ստուդիայի հիմնադիր,
8. **Մելիք Կարապետյան** - Պրոդյուսեր, Art-Film ընկերության հիմնադիր,
9. **Սաթիկ Ստեփանյան** - «Սաթի-Սինեմա փրոդաքշն» ՍՊԸ,
10. **Վահրամ Մխիթարյան**- ռեժիսոր
11. **Բաֆֆի Մովսիսյան** – կինոքննադատ,
12. **Բաֆֆի Նիզիբիյան** - պրոդյուսեր, Deem Communications-ի ստեղծագործական տնօրեն,